ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 դեկտեմբերի 2019թ. N 81-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Զրարեր բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը՝ կարգադրում եմ.

1.Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքերի՝ Զրարեր գյուղի պահակատան և պահեստի, դուրսգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝
Միշա Եղիազարյան, համայնքի ղեկավարի տեղակալ,

հանձնաժողովի անդամներ՝
Մուշեղ Հարությունյան, Զրարեր բնակավայրի վարչական ղեկավար,
Դանիել Դանիելյան, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Շուշիկ Ասատրյան, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ,
Ավետիք Ասոյան, համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),
Արման Օհանյան, համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ):

2.Հանձնաժողովին՝
ա)երկու շաբաթվա ընթացքում իրականացնել Զրարեր գյուղի պահակատան և պահեստի դուրսգրման աշխատանքները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և

էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31 ի N 787 Ն հրամանով հաստատված կարգի.

բ) կազմել նշված գույքերի դուրսգրման ակտ և ներկայացնել:

3.Զրաբեր գյուղի պահակատան և պահեստի դուրսգրման աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնել դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված եզրակացությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

փողոց 1/13

<<19>> 11 2019 թ

28

Ձեր N 2179 հանձնարարականին ի պատասխան տեղեկացնում ենք , որ Ջրաբեր բնակավայրի տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող՝ պահակատունը և պահեստի շենքը գտնվում է վատ վիճակում և ենթակա է դուրս գրման:

Վարչական ղեկավար՝ Մ Հարությունյան

9 3549 16.01.19

ՁԼ ՀՄ-13

Հաստատում եմ

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ — Համայնքի ղեկավար — Հակոբ Բալասյան

կազմակերպության անվանումը — պաշտոնը — ստորագրությունը — անունը, ազգանունը

«»_____2019 թ.

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱԿՏ N 01

«16» դեկտեմբերի 2019 թ.

«04 » դեկտեմբերի 2019 թվականի թիվ 81 - Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը

ՀՀ Քաղաքաշինական պետական կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից տրված 16 12.2019թ. եզրակացության

լուծարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի անվանումը, ամսաթիվը, համարը

հիման վրա լուծարման նպատակով կատարեց ակտում նշված հիմնական միջոցների (միջոցների) զննում:

Ստորաբաժանման անվանումը, ում նյութական պատասխանատվության ներքո է գտնվում լուծարվող հիմնական միջոցը (միջոցները)	*Մուշեղ Հարությունյան, Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար՝* (անունը, ազգանունը, պաշտոնը
Զննման արդյունքում արձանագրվեց՝ Հիմնական միջոցի (միջոցների) լուծարման պատճառը	*Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի պահակատան և պահեստի շինությունները օգտագործման համար պիտանի չեն և դրանց կարիքը չի զգացվում:* *Ջրաբեր բնակավայրի 4- րդ փողոցում գտնվող պահակատան և պահեստի շինությունների տեխնիկական վիճակը գնահատվում է խիստ անբավարար, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող շինարարության նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 4-րդ ատրճանի :*

Հիմնական միջոցների տեխնիկական վիճակը՝ *խիստ անբավարար*

Հանձնաժողովի եզրակացությունը *Ելնելով հետազննության արդյունքներից և հաշվի առնելով, որ պահակատան և պահեստի կարիքը չի զգացվում, ուստի շինությունները ենթակա են քանդման:*

աղյուսակ 1

h/h	Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը	Գույքային համարը	Հիմնական միջոցի			Նշումներ
			համախառն հաշվեկշռային արժեքը	կուտակված մաշվածությունը	հաշվեկշռային արժեքը	
1	2	3	4	5	6	7
1	պահակատուն		69645	24880	44765	
2	պահեստ		548897	433628	115269	

Հավելված՝ կից փաստաթղթերի ցանկը՝ *ՀՀ Քաղաքաշինական պետական կոմիտեի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից տրված 16 12.2019թ. եզրակացությանը՝ 7 թերթ:*

ՏԵՂԵԿԱՆՔ

Հիմնական միջոցների լուծարումից մուտքագրման ենթակա նյութական արժեքների վերաբերյալ

աղյուսակ 2

հ/հ	Ապրանքանյութական արժեքների անվանումը	Ապրանքանյութական արժեքների ծածկագիրը	Քանակը	Չափի միավորը	Միավորի արժեքը	Գումարը
1	2	3	4	5	6	7
					Ընդամենը	

Հանձնաժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ _____ Մ. Եղիազարյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Հանձնաժողովի անդամներ՝ Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար _____ Մ. Հարությունյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ _____ Դ. Դանիելյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ _____ Շ. Ասատրյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ), _____ Ա. Ասոյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ) _____ Ա. Օհանյան
պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

«16 » դեկտեմբերի 2019 թ.

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(«ՔՇՓԿ» ԲԲԸ)

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԻ № 4 ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԱԿԱՏԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան - 2019

«ՔՇՓԿ» ԲԲԸ
ելք 12/247
«16» 12 2019թ.

«Հաստատում եմ»
«ՔՇՓԿ» ԲԲԸ
Գլխ. մաս. գծով փոխտնօրեն
_____ Ա.Մովսիսյան
«16» 12 2019թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքին պատկանող, Զրաբեր գյուղի № 4 փողոցում գտնվող պահակատան և պահեստի տեխնիկական վիճակի վերաբերյալ

Հետազննությունը կատարվել է Բյուրեղավան համայնքի ղեկավար Հ.Բալասյանի առ 09.12.2019թ. դիմումի համաձայն:

Շինությունների համառոտ նկարագրությունը և հետազննման արդյունքները բերված են ստորև առանձին-առանձին:

Պահակատուն

Այն միահարկ, մեկ մուտքով, հատակագծում քառակուսի, ~ 4,0x4,0 մ եզրաչափերով, փոքր թեքությամբ տեղանքի վրա տեղակայված, առանձին շինություն է

Նկ. 1. Պահակատան տեսքը

Շինության կոնստրուկտիվ համակարգը լուծված է 2 կրող ու լայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաշարվածքով:

Պատերն ունեն 50 սմ հաստություն և իրականացված են կոպտատաշ տուֆաքարի «միդիս տիպի շարվածքով, բարդ շաղախի կիրառմամբ:

Վերնածածկն իրագործված է փայտե տարրերից (չորասյուներից հեծաններով և տախտակով):

Տանիքը միալանջ է. փայտե ծպեղային համակարգով, ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Հետազննությամբ պարզվեց հետևյալը՝

- Շինությունը տարիներ շարունակ մնացել է բարձիթողի վիճակում:
- Շինության դուռը, պատուհանը և հատակի փայտե տարրերը բացակայում են:
- Պատերի որոշ տեղամասերում առկա են քարերի անկում և թափում (նկ. 2): Ընդ որում շարվածքն իրագործված է շատ անորակ:

Նկ. 2. Առանձին քարերի թափում

- Շինության գետնախարսխային հատվածը տուֆաքարե շարվածքով է, որի պատճառով մթնոլորտային ջրերը գրունտից ներծծվում են պատերի մեջ:
- Վերնածածկի և տանիքի փայտե տարրերը հնամաշ են, մեծավալ մասամբ փտած: Ընդ որում վերնածածկն էապես ճկված է (նկ. 3), իսկ ծածկի հեծանները ազատ հենվում են պատերի վրա (խարսխակապ չեն):

Նկ. 3. Վերնածակի և տանիքի վիճակը

- Տանիքածածկույթն ունի բազմաթիվ վնասվածքներ, իսկ որոշ տեղամասերում՝ բացակայում է (նկ. 3):

Ելնելով հետազննության արդյունքներից շինության տեխնիկական վիճակը գնահատվում է խիստ անբավարար, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող շինարարության նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 4-րդ աստիճանի:

Ելնելով հետազննության արդյունքներից և հաշվի առնելով, որ պահակատան կարիքը չի զգացվում, ուստի այն ենթակա է քանդման:

Պահեստի շինություն

Այն միահարկ, մեկ մուտքով, հատակագծում ուղղանկյունաձև, ~ 3,0x8,0 մ եզրաչափերով, փոքր թեքությամբ տեղանքի վրա տեղակայված շինությունը է (նկ. 4), որը մի երկայնական ճակատով հարում է կից տանը :

Շինության կոնստրուկտիվ համակարգը լուծված է 2 երկայնական (կրող) ու լայնական պատերով և տանիքածածկույթով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից:

Պատերն ունեն 20 սմ հաստություն և իրականացված են կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքով, իսկ հարող պատը՝ միաձույլ բետոնով:

ՀԱՅԱՔԻՇԻՆԿԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ

Նկ. 4. Պահեստի շինությունը

Տանիքածածկն իրականացված է պողպատե (50 տրամագծի խողովակներից) եռանկյունաձև ֆերմաներով, փայտե ծպեղներով և ալիքավոր ասբոշիֆերից ծածկույթով:

Հետազննությամբ պարզվեց հետևյալը՝

- Խողավակներից ֆերմաների շեղմույթերը և կանգնակները բացակայում են, որի պատճառով դրանց վերին գոտիները ունեն տարբեր աստիճանի ճկվածքներ: Կողաճակատային պատերում ճակտոնները բացակայում են, որի պատճառով տանիքածածկի և պատերի միջև առկա են մեծաչափ բացակներ: (նկ. 5)
- Միաձույլ բետոնե պատը կիպ հարում է հարևան տան խամքարե շարվածքով պատին: Դրանք բաժանված չեն միմյանցից շինարարական դեֆորմացիոն կարանով:
- Աջակողմյան կողաճակատային պատը կիսով չափ փլուզված է (նկ. 6):
- Պատերի վրա հակասեսյմիկ գոտիները բացակայում են: Պատերի կցորդումներում պողպատե ցանցերով հորիզոնական ամրանավորումը բացակայում է:
- Սխալ կոնստրուկտավորման պատճառով աջակողմյան կողաճակատային պատը (ամբողջ բարձրությամբ) տարանջատված է գլխավոր ճակատային պատից (նկ. 7):

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ

Նկ. 5. Ֆերմաների և կողաճակատային պատերում առաջացած բացակների տեսքը

Նկ. 6. Փլուզված պատի տեսքը

Նկ. 7. Աջակողմյան և գլխավոր ճակատների տարանջատումը

- Կողաճակատային պատերը հարում են միաձույլ բետոնե պատին և չունեն որևէ խարսխում վերջինիս հետ:
- Շինությունը չունի տարածական կոշտություն և անգամ ոչ մեծ դինամիկ ուժերից կարող է մասնակի կամ ամբողջական փլուզվել:

Ելնելով հետազննության արդյունքներից շինության տեխնիկական վիճակը գնահատվում է խիստ անբավարար, իսկ վնասվածության մակարդակը՝ 4-րդ աստիճանի:

Շինությունը ենթակա է քանդման:

Թիվ 12 լաբ. առաջատար ճարտարագետ՝ Հ.Մկրտչյան

«ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ